



ՎԱՐԱՉՆ ՈՒ ԱՂՈՒՔԱԸ Վարդան Այգեկցի


Վարազը մեծ ջանքով եռանդով կը սրեր իր ակռաներն ու ժանիքները: Աղուեսը կը մօտենայ անոր եւ կը հարցնէ.
 -Այդ ի՞նչ կ'ընես, չէ՞ որ հիմա կռուի ու պատերազմի վտանգ չկայ:
 -Լռէ՛, գարշելի՛ աղուես,- կը պատասխանէ վարազը,- դուն ի՞նչ կը հասկնաս պատերազմէն: Պատերազմի ժամանակ ո՞վ կրնայ զբաղիլ զենք սրելով: Չենքը խաղաղութեան ատեն կը սրեն, երբ պարապ ես:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹԵՐԹԻԸ

Հայերէն առաջին մանկական պատկերազարդ ամսագիրը եղած է «Աղբիր» հանդէսը, որ լոյս տեսած է «1883-1918» թուականներուն, հրապարակախօս եւ մանկագիր Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ: Ամսագիրը նպատակ ունեցած է մանուկներուն մէջ արթնցնել պատուասիրութիւն, սեր դէպի մարդը, վսեմն ու ազնիւը: Տպագրած է գրական գեղարուեստական, բնագիտական եւ աշխարհագրական նիւթեր, նաեւ կենսագրական ակնարկներ նշանաւոր մարդոց մասին եւ թարգմանութիւններ համաշխարհային անուանի մանկագիրներէ՝ Անտրսոնէն, Հոֆմանէն, Կեթթէն, Պուշկինէն եւ ուրիշներէ:

Այդ թերթին մէջ մանուկներուն համար գրած են Րաֆֆին, Պերճ Պռոշեանը, Ղազարոս Աղայեանը, Յովհաննէս Թումանեանը, Ալեքսանդր Ծատուրեանը, Աւետիք Իսահակեանը, Լեօն եւ ուրիշներ:

«Աղբիր»ը կարելոր դեր ունեցաւ արեւմտահայ շրջանակներուն մէջ մանկական գրականութեան զարգացման գծով:



ԱՊԱՇԽԱՐՈՂ ԳԱՅԼԸ Մխիթար Գօշ

Գայլը կը ծերանայ ու հանդիպելով ոչ-խարի հօտի մը՝ կ'ըսէ. «Այժմ ապաշխարած եմ: Ձեզ շատ վշտացուցած եմ, ուստի կ'ուզեմ գալ ու ձեր տան ու բակի աւելածուն ըլլալ, որպէսզի թողութեան արժանանամ: Ես պիտի պաշտպանեմ ձեր մանուկները ուրիշ գայլերէ»:

Եւ ուրախանալով՝ ոչխարները շուններուն կ'ըսեն. «Այլեւս մի՛ հալածէք գայլը»:

Գայլը կը մտնէ փարախ ու կը համբերէ մինչեւ որ մեծնան գառնուկները, ապա կը սկսի յօշոտել եւ ուտել զանոնք:

Առակս այսպիսի խրատ կու տայ,- շատ չհաւատալ չարագործին:

ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՌԻՅԱ ԿԱՐԵԱՆ-ՏԻՐՊՈՒԲԵԱՆ
ՆԱԿԱՐԱԶԱՐՈՒՅՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇԻՇԵԱՆ

ԳԻՏԷ՛Ք ԹԵ՛ ԻՆՉ ԳՈՅՆ ՈՒՆԻՆ ԱՍՏՂԵՐԸ

Կարմիր, կապոյտ կամ դեղին: Այո՛, աստղերը կրնան ըլլալ կարմիր, կապոյտ կամ դեղին... Կարգ մը աստղեր նոյնիսկ քիչ նարնջագոյն եւ կամ ճերմակ: Ամեն ինչ կախեալ է անոնց շերմաստիճանէն, որքան աստղ մը տաք կ'ըլլայ, այնքան անոր գոյնը դեպի կապոյտ կը հակի, որքան ան պաղ ըլլայ, այնքան ան կարմիր կ'ըլլայ:

ՈՐՈՒ ԿԸ ԳՈՏԿԱՆԻ ԱՆՋՐՊԵՏԸ


Բոլորին: Այս հարցը դրուեցաւ նախորդ դարու կեսերուն, երբ անջրպետի հետախուզական աշխատանքները սկսան: Այլապէս կրնա՞նք երեւակայել վեճը, որ կրնար յառաջանալ: Իւրաքանչիւր երկիր պիտի ուզէր անջրպետի իր բաժինը... յատկապէս եթէ հոն հարստութիւններ գտնուէին:

Հետեւաբար, 1967 թուականին երկիրները որոշած են, թէ ոեւէ մէկը ազատ էր հետախուզելու անջրպետը, սակայն ոչ մէկը անոր տերն էր: Այս որոշումը ճիշդ իր ժամանակին հասաւ, որովհետեւ երկու տարի ետք, 1969-ին առաջին մարդը լուսինին վրայ կը քալէր:

ԱՌՍՆՑ ՍԱՊԱՏԻ ՈՒՂՏ ՏԵՍԱՐԾ ԷՔ

Այս ուղտը կը նմանի լամային, սակայն անկէ աւելի պզտիկ է: Ան մաս կը կազմէ ուղտի ընտանիքին, բայց ուղտի նման սապատ չունի: Անիկա կ'ապրի Հարաւային Ամերիկայի մէջ՝ Փերուի, Գոլիվիոյ եւ Զիլիի բարձր լեռներուն վրայ, 2500 մէթր բարձրութեան վրայ:

Այդ շրջաններուն մէջ տիրող ցուրտէն պաշտպանուելու համար բնութիւնը անոր օժտած է հաստ, սեւ, ճերմակ կամ սրճագոյն մուշտակով մը, որ կրնայ մինչեւ 40 սմ. հաստութիւն ունենալ: Մարդիկ անոր մուշտակէն կը շինեն տարբեր տեսակի կերպասներ, որոնք կը գործածուին շքեղ եւ հանգստաւետ հագուստներ պատրաստելու համար:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ութը ոսկորները:

Կրնա՞ս գտնել շրջանակին մէջի գլխարկին համապատասխանող գլխարկը:

Իւրաքանչիւր շարքի մէջ կը տեսնէք 4 բառ, որոնցմէ մէկը տարբեր է միւսներէն: Կրնա՞ք գտնել զանոնք:

- Արաքս --- Եփրատ --- Ճորոխ --- Սիփան
- Արագած --- Կուր --- Արարատ --- Նեմրուք
- Դամասկոս --- Փարիզ --- Գահիրէ --- Յունաստան
- Զինաստան --- Հայաստան --- Աշտարակ --- Իտալիա

ԽՈՐԱՄԱՆԿ ԹՌՉՈՒՆԸ ԿՏՈՒՑԷՆ ԿԸ ԲՈՒՆՈՒԻ



Կը պատմուի, թե առիծը, գայլն ու աղուերը իրարու հանդիպեցան գիւղէն դուրս գտնուող անտառի շաղաքին մէջ եւ իւրաքանչիւրը այդ օրուան ըրած որսով յոխորտաց:

- Բարեկամներ,- ըսաւ աղուերը,- այնքան առատ որս ունեցայ, որ ուրիշներու անգամ բաժին հանեցի:
- Միշտ նոյն պարծենկոտ յանկերգը, այլեւս ձանձրացուցիր,- դժգոհեցաւ գայլը,- գոնէ առիծին ներկայութեան քիչ մը համեստ եղիր:
- Ժամանակ է, որ ես այդ լեզուիդ չափը տամ,- վրայ բերաւ առիծը: Սա աչքբացութեանդ շօշափելի ապացոյցը տուր, այլապէս մէկ հարուածով կը տապալեմ քեզ:

Աղուերը երկար մտածեց՝ չափեց, ձեւեց ու վերջապէս ծրագիր մը կազմեց: Այնուհետեւ կրիան ու խեչափառը գտնելով առաջարկեց.

- Եղբայրներ, ինչո՞ւ ըսեր են՝ հացին ձայնը անելի հեռու կ'երթայ, քան թմբուկին ձայնը. եկեք այս սովի ու սղութեան օրերուն ընկերովի ցորեն ցանենք:

- Ճիշդ է, լաւ ըսիր, աղուէ՛ս աղբար, ես համաձայն եմ,- ըսաւ խեչափառը:

- Ե՛ս ալ համաձայն եմ, պայմանաւ որ աշխատանքը, շահն ու վնասը հաւասար չափով բաժնենք,- անելցուց կրիան:

Համաձայնութիւն գոյացնելէ ետք, կենդանիները ցորենը ցանեցին: Հունձքի ժամանակ՝ խեչափառը հնձեց, աղուերը ցորենը ժողվեց, կալ փոխադրեց, կրիան ալ կամեց, ապա միասնաբար երնեցին ու երեք դէգ պատրաստեցին՝ մէկը ցորենը, միւսը յարդը, երրորդն ալ գասրան:

Կենդանիները գոհունակութեամբ դիտեցին իրենց աշխատանքին արդիւնքը եւ բերքը բաժնելու մասին մտածեցին:

- Եբայրներ,- առաջարկեց աղուերը,- հիմա երեքս ալ շատ յոգնած ենք. Լաւ կ'ըլլայ, որ հանգչինք: Վաղը առաւօտ կանուխ կ'արթնանք ու մեզմէ ան, որ ամենէն առաջ կալ հասնի, կը գրաւէ ուզած դէգը եւ այդ կ'ըլլայ իր բաժինը: Համաձայն էք:

- Արդար է, իրաւունքը առաջին հասնողին է,- հաստատեց խեչափառը:

- Ե՛ս ալ համաձայն եմ,- երկրորդեց կրիան,- պայմանաւ որ առաջին արթնցողը միւսներն ալ արթնցնէ ու երեքս միասին ճամբայ ելլենք:

- Այդքան բան անշուշտ հասկնալի է,- եզրակացուց աղուերը ու շատ ուրախացաւ, որ գործակիցները խաբէլը այդքան հեշտ եղած էր: Առիծը իրեն դէմ գրգռող նախանձոտ գայլը այլեւս կամաց-կամաց պիտի խոնարհէր իր հնարամտութեան առջեւ, իսկ անտառին արքան ով գիտէ ի՞նչ մեծ շնորհ պիտի ըներ իրեն...:

Այս անուրջներով տարուած՝ աղուերը խոր քուն մտաւ: Խեչափառը տեղաւորուեցաւ աղուեսին քով, իսկ կրիան երկուքէն աննկատ հեռացաւ: Իր բաժինին ճշդումը անորոշ ձգել չէր ըլլար...:

Յաջորդ առաւօտ, երբ աղուերը աչքերը բացաւ, տեսաւ, որ խեչափառն ու կրիան դեռ քնացած էին:

- Ժամանակ չկորսնցնենք, եղբայրներ,- պիտի կառչեցաւ աղուեսին պոչին ու անոր հետ ալ սլացաւ գնաց: Իսկ կրիան, ծանր-ծանր անոնց հետեւեցաւ:

Կալ հասնելով աղուերը ինկաւ ցորենի դէզին վրայ:

- Վա՛յ, վա՛յ, ճգմեցիր զիս: Արդարութիւնը ա՛յս կը պահանջէ,- այս անգամ բողբոջեց խեչափառը յարդի դէզին վրայէն:

Գասրան մնաց աղուեսին:

Շշմած-շվմորած՝ ան պոչը հաւաքեց ու հեռացաւ:

Ժամեր ետք, կրիան հեւասպառ կալ հասաւ ու շնորհակալութիւն յատնեց իր բարեկամ խեչափառին, որ գիշերով ճամբայ ելած ու առտուան յաղթանակը ապահոված էր...:



ՏԱԹԵԻ ՎԱՆԲԻՆ ԶԱՆԳԸ

Լենկթիմուր լրտես կը դրկէ Ռոտտանի ձորի գիւղերը, հասկնալու համար, թէ հայերը ինչպէ՞ս տեղեակ կ'ըլլան իր անակնկալ յարձակումներէն: Լրտեսը կը հասկնայ, որ ամեն անգամ, երբ Լենկթիմուրի բանակը սկսեր արշաւանքի՝ հայ սուրհանդակները լուրը կը բերէին Տաթեի վանք: Վանահայրը կը թելադրէր զանգը հնչել: Գիւղացիները սպառնազինուելով կը վազէին թշնամիին դէմ դնելու: Լրտեսը կը հասկնայ, որ վանքի զանգը ահագանգի իմաստ ունի: Ան կը յաջողի գաղտնօրէն կտրել զանգին լեզուակը:

Լենկթիմուրի հրոսակները կը մտնեն Ռոտտանի կիրճը, կ'աւերեն ու կ'աւարեն գիւղերը, կը սպանեն շատերը: Ահագանգը չի հնչեր, դիմադրութիւն չի կազմակերպուիր:

-Ինչո՞ւ զանգը չհնչեց,- կը հարցնեն փախստական գիւղացիները:

-Ռոտվիտեւ զանգը զուր է, զանգը զուր է,- ցաւով կ'ըսէ վարդապետ մը:

Ատկէ ետք Սիւնեաց աշխարհի այդ անկիւնը Չանգեզուր կը կոչուի:

ԱՆՀԱԲԱՏԱԿԻ ԲԱՅՅ ԻՐԱԲ

* Աշխարհի ամենէն մեծ լողաւազանը կը գտնուի Չիլիի մէջ եւ անոր մեծութիւնը հաւասար է 16 ֆութպոլի դաշտերու:

* Աշխարհի ամենէն երկար կամուրջը Չինաստանի մէջ Տանեակ քունշան կամուրջն է: Անոր երկայնքը 168,8 քմ. է:

* Մարդկային մարմինը կազմուած է 10,000 միլիառ բջիջներէ:

* Մրջին մը կրնայ իր կռակին վրայ շալկել իր կշիռքէն 50 անգամ աւելի ծանր առարկաներ:

* Կատուի նորածին ձագերը խուլ եւ կոյր կ'ըլլան: Երկու շաբաթ ետք անոնք կը սկսին լաւ լսել եւ լաւ տեսնել:

* Նուռ մը ընդհանրապէս «600-1000» կարմիր ուտուելիք հատիկներ կ'ունենայ: Անոնք շատ սննդարար են:

* Կիները առաջին անգամ Արդի Ռդիմպիական խաղերուն մասնակցեցան Փարիզի մէջ, 1900-ին:

* Մանուկները իրենց աչքերը շատ աւելի նուազ կը թարթեն, քան՝ չափահասները, մօտաւորապէս մէկ կամ երկու անգամ մէկ վայրկեանուան մէջ:

* 997 մարզիկներէն միայն 3 առ հարիւրը կիներ են:

* Ատլանտեան ովկիանոսը ամեն տարի 2,5 սմ. կը մեծնայ:

